



Լևոն Շանթ

Ես պատրանքը սիրեցի

Շուրջիս տափակ ու չոր կեանքէն գայրացկոտ,

Կանչեցի ես իտեալս կենսածին.

Բայց ետեւէս կ՛ծու ծաղրով անամօք

«Է՛, ան միայն գրքի մէջն է» պոռացին.

Ես ալ գիրքը ինձի ընկեր ընտրեցի,

Ես պատրանքը սիրեցի:

Մենութեան մէջ լուռ, մթնշող սենեակիս,

Չիրագործուող երագներու մէջ թաղուած,

Հեռո՛ւ ու վե՛ր սաւառնեցաւ միշտ հոգիս,

Հոն, ուր կեանքիս գոհար յոյսերն են մաղուած.

Ես, մօր մը պէս, անուրջներս գգուեցի,

Ես պատրանքը սիրեցի:

Երբ գեղեցիկ թարմ աղջիկը ժպտեցաւ,

Միրտս դողաց յուզումով մը ներդաշնակ.

Միրեցի ալ, միայն ոչ ան, որ անցաւ.

Այլ անոր նուրբ յափշտակիչ դէմքին տակ

Նոր էակ մը, որ մտքէս հոն անցուցի,

Ես պատրանքը սիրեցի:

Հայրենիքի հուր կարօտը բնածին

Երբ բորնկցուց յուզուած լանջս տենդօրէն,

«Դուն հայրենիք, դուն հող շունիս» հծծեցին.

Ես դառնացայ, բայց ալ ուժգին այդ օրէն

Իմրս չեղող հայրենիքս պաշտեցի,

Ես պատրանքը սիրեցի:

Ինձի համար այն ժամերը թանկ եղան,

Երբ ներշնչուած ստեղծեցի միշտ անգոյ,

Բայց անձնուրաց ազնիւ դէմքեր սիրեկան,

Երբ իրական աշխարհին մէջ միշտ դժգոհ,

Իտէալի կեանքէն երգել ուզեցի.

Ես պատրանքը սիրեցի: